ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/310

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Քոյլոյանի (լիազորագիր՝ տրված 29.11.2021թ.),

«Լանկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 29.11.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.11.2021թ. թիվ 26/26-1/19206-2021 գրությամբ «Արկինա», «Լանկա» և «Լայթ ընդ մոր» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 17.11.2021թ. թիվ 1/18-2/73679-2021 գրության հիման վրա, 24.11.2021թ. թիվ 26/26-

1/19206-2021 գրությամբ նախաձեռնել է «Արկինա», «Լանկա» և «Լայթ ընդ մոր» ՍՊ ընկերություններին (հետայսու նաև՝ Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ընկերությունների կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումները</u>.

1. «Արկինա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արկինա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/310 ընթացակարգի շրջանակներում 30.11.2021թ. ժամը 09:10-ին և 08.12.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Լանկա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 06.12.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Լանկա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2021/310 ծածկագրով ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 17.11.2021թ. թիվ 1/18-2/73679-2021 գրությունը (այսուհետ՝ Գրություն):

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրությունը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք այդ գրության դեմ:

1. Գործի նախապատմությունը.

1.1. Ընկերությունը մասնակցել է Պատվիրատուի 02.11.2021թ.-ին հայտարարած № ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ Աճուրդ), որի հակադարձ աճուրդը նշանակված էր 11.11.2021թ.-ին: Պատվիրատուն Գրությամբ հայտնել է, որ Աճուրդին Ընկերության ներկայացրած հայտը չի համապատասխանել հրավերով սահմանված պայմաններին, որի հիմքով Պատվիրատուն 10.11.2021թ.-ին անհամապատասխանության վերաբերյալ ծանուցելով Ընկերությանը առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում հայտը շտկել և շտկված հայտը ներկայացնել

Պատվիրատուին և, քանի որ Ընկերությունը չի կատարել Պատվիրատուի նշյալ պահանջը Վերջինս մերժել է Ընկերության հայտը: Մինչդեռ, 10.11.2021թ.-ին Ընկերությունը հայտում առկա անհամապատասխանության մասին չի ծանուցվել, ավելին՝ Աճուրդին Ընկերության ներկայացրած հայտը 10.11.2021թ.-ին գնահատվել չէր կարող, քանի որ էլեկտրոնային աճուրդի համակարգում մասնակիցների հայտերը գնահատման համար հասանելի են միայն հակադարձ աճուրդի ամփոփումից հետո, այսինքն՝ տվյալ դեպքում Ընկերության հայտը հնարավոր էր գնահատել միայն 11.11.2021թ.-ից սկսած, քանի որ հակադարձ աճուրդը ամփոփվել էր այդ օրը: Հետևաբար անհիմն է Պատվիրատուի պնդումը, որ 10.11.2021թ.-ի դրությամբ Ընկերության հայտում հրավերի պահանջների նկատմամաբ արձանագրվել է անհամապատասխանություն, որի վերաբերյալ Ընկերությունը այդ օրը ծանուցվել է:

Բացի այդ, Աճուրդով ձեռքբերման ենթակա գնման առարկաները ընդգրկված չեն www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակված գնումների պլանում, որպիսի հանգամանքներում Աճուրդի կազմակերպման իրավական հիմքը բացակայում է:

2. Դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

2.1. Պատվիրատուն Գրությամբ հայտնել է, որ Աճուրդին Ընկերության ներկայացրած հայտը չի համապատասխանել հրավերով սահմանված պայմաններին, որի հիմքով Պատվիրատուն 10.11.2021թ.-ին անհամապատասխանության վերաբերյալ ծանուցելով Ընկերությանը առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում հայտը շտկել և շտկված հայտը ներկայացնել Պատվիրատուին և, քանի որ Ընկերությունը չի կատարել Պատվիրատուի նշյալ պահանջը Վերջինս մերժել է Ընկերության հայտը:

2.2. 10.11.2021թ.-ին Պատվիրատուն հայտը շտկելու վերաբերյալ ծանուցում Ընկերությանը չի ուղարկել :

2.3. Աճուրդի հակադարձ աճուրդը նշանակված էր 11.11.2021թ.-ին: Ուստի Ընկերության հայտը հնարավոր էր գնահատել միայն այդ օրվանից սկսած:

2.4. Աճուրդով ձեռքբերման ենթակա ապրանքները (այսուհետ՝ Գնման առարկաներ) ընդգրկված չեն Տեղեկագրում հրապարակված գնումների պլանում, որպիսի հանգամանքներում Աճուրդի կազմակերպման իրավական հիմքը բացակայում է:

3. Ընկերության առարկության հիմքերը և փաստարկները.

3.1. Տեղեկագրում հրապարակված էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ուղեցույցի համաձայն (էջ 39)՝ Առցանց աճուրդի ավարտից հետո տվյալ մրցույթի համար սկսվում է գնահատման գործընթացը, և այն ստանում է «Դիմում Հայտարարության գնահատում» կարգավիճակը: Այս փուլում հանձնաժողովի անդամները գնահատում են մրցույթին դիմած մասնակիցների Դիմում-Հայտարարությունները և ստուգում դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ քարտուղարը կառավարում է գնահատման փուլն ու ամփոփում այն:

Վերոգրյալից հետևում է, որ հայտերի գնահատման գործընթացը սկսվում է հակադարձ աճուրդի ավարտից հետո, քանի որ մինչև հակադարձ աճուրդի ավարտը Էլեկտրոնային աճուրդի համակարգում մասնակիցների հայտերը գնահատման համար հասանելի չեն: Հետևաբար մինչև հակադարձ աճուրդի ավարտը Պատվիրատուն մասնակիցների հայտերը չէր կարող գնահատել, ուստի անհիմն է սույն Ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք ծառայած Պատվիրատուի պնդումը, որ 10.11.2021թ.-ի դրությամբ Ընկերության հայտում հրավերի պահանջների նկատմամաբ արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք Ընկերությունը 10.11.2021թ-ին հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկել: Քանի որ 10.11.2021թ.-ին հակադարձ աճուրդը դեռ չէր ավարտվել և Պատվիրատուն այդ օրվա դրությամբ Ընկերության հայտը գնահատելու հնարավորություն չուներ: Բացի այդ, 10.11.2021թ.-ին Պատվիրատուն հայտը շտկելու վերաբերյալ ծանուցում Ընկերությանը չի ուղարկել: Ելնելով նշյալից կարծում ենք, որ սույն Ընթացակարգը անհրաժաշտ է մերժել, քանի որ ինչպես պարզեցինք՝ Ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք ծառայած Պատվիրատուի պնդումը անհիմն է:

3.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանված է, որ տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն. «4. Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում. 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը). 3) պայմանագրի կնքում. 4) պայմանագրի կատարում և կառավարում»:

Կարգի 16-րդ կետի համաձայն. «16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, (…)»

Կարգի 17-րդ կետի համաձայն. «17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է»:

Կարգի 20-րդ կետի համաձայն. «20. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝ 1) պատասխանատու ստորաբաժանում, և 2) գնումները համակարգող 3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (…)»

Կարգի 21-րդ կետի համաձայն. «21. Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ 1) կազմում և հաստատում է գնման հայտը, (…)»:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ պետական գաղտնիք չպարունակող գնման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է ունենալ՝ տվյալ գնման գործընթացի շրջանակներում ձեռքբերման ենթակա գնման առարկան պարունակող, սահմանված պահանջներին համապատասխան հաստատված ու Տեղեկագրում հրապարակված գնումների պլան, ընդ որում՝ գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշմամբ: Այսպիսով, եթե նշյալ պահանջներին համապատասխանող գնումների պլանը Տեղեկագրում հրապարված չէ, ապա պատվիրատուն իրավունք չունի սկսել տվյալ գնման գործընթացը: Քանի որ պետական գաղտնիք չպարունակող

գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և Տեղեկագրում հրապարակված գնման առարկան պարունակող գնումների պլանի առկայությունն է: Հետևաբար, եթե գնման գործընթացը կազմակերպվել է առանց սահմանված պահանջներին համապատասխան հաստատված գնման առարկան պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակելու, ապա այդ գնման գործընթացը համարվում է կազմակերպված վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում այն չի կարող առաջացնել իրավաբանական հետևանքներ: Բացի այդ, համապատասխան հայցադիմումի առկայության դեպքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ, 465-րդ հոդվածների և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի ուժով նման խախտումներով կազմակերպված գնման գործընթացը, ինչպես նաև այդ գործընթացից ածանցյալ բոլոր գործարքները դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Աճուրդով ձեռքբերման ենթակա Գնման առարկաները պարունակող գնումների պլանը Տեղեկագրում հրապարակված չէ: Ուստի կարող ենք փաստել, որ Աճուրդը կազմակերպվել է վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ և առանց իրավական հիմքի, որպիսի պայմաններում կարծում ենք, որ Ընթացակարը անհրաժեշտ է մերժել: Հարկ է նշել, որ Կարգի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն: Նշյալից հետևում է, որ Աճուրդից բխող բացասական հետևանքները՝ ինչպիսին է նաև այս Ընթացակարգը, չեն կարող մեկնաբանվել ի վնաս մասնակցի: Ուստի կարծում ենք, որ սույն Ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը ենթակա չէ Ցուցակում ներառման:

Բացի այդ, գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բազմիցս վերլուծելով վերոգրյալ նորմերը՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 15-րդ հոդվածի 3-րդ մասը, Կարգի 4-րդ, 16-րդ, 17-րդ, 20-րդ և 21-րդ կետերը եզրահանգել է, որ եթե գնման ընթացակարգով ձեռքբերման ենթակա գնման առարկան պարունակող գնումների պլանը սահմանված կարգով Տեղեկագրում հրապարակված չէ, ապա այդ գնման գործընթացը համարվում է կազմակերպված առանց իրավական հիմքի և ոչ իրավաչափ: Արդյունքում, Ցուցակում մասնակիցներին ներառելու նպատակով

նախաձեռնված ընթացակարգերը, նման խախտումներով կազմակերպված գնման գործընթացների շրջանակներում, գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նշյալ որոշումներով մերժել է: Ուստի առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 600-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 18-րդ կետով կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտ է կիրառել Բողոքներ քննող անձի նախկինում կայացրած որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները, ու Ընկերությանը Ցուցակում ներառելու Ընթացակարգը մերժել:

4. Պահանջը

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 50-րդ հոդվածով և Կարգի 2-րդ կետով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Լանկա» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2021/310 ծածկագրով ընթացակարգը»:

«Լանկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/310 ընթացակարգի շրջանակներում 30.11.2021թ. ժամը 09:10-ին և 08.12.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 08.12.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստին, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 30.11.2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«1.Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1.1.ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար տնտեսական ապրանքների մատակարարման նպատակով հրապարակել է թիվ «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31» էլեկտրոնային աճուրդը (այսուհետ նաև գնման ընթացակարգ):

1.2. Գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել նաև «ԼԱՅԹ ԸՆԴ ՄՈՐ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Մասնակից):

1.3. Պատվիրատուն 12.11.2021 թվականի թիվ 2 արձանագրային որոշմամբ Մասնակցի հայտում արձանագրել է անհամապատասխանություն, այն մասով,

Մասնակցի հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի: Ինչպես նաև այն հանգամանքը, որ տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրում առաջարկվող ապրանքը:

1.4. Արձանագրված անհամապատասխանության մասին ծանուցվել է Մասնակիցը և կատարվել է շտկում տեխնիկական բնութագրի մասով:

1.5. Գնման ընթացակարգի հրավերը չի պարունակում 1.2 կամ 1.3 հավելված:

1.6. Անկախ 1.2 կամ 1.3 հավելվածի բացակայությունից Մասնակիցը ներկայացրել է Պատվիրատուի պահանջած փաստաթուղթը երկու եղանակով, ըստ բանավոր պահանջի:

1.7. Պատվիրատուն 16.11.2021 թվականի թիվ 3 արձանագրային որոշմամբ նշել է, որ Մասնակցի դիմում հայտարարությամբ լրացված է 3 իրական շահառուի տվյալ, մինչդեռ հայտարարագրում միայն Խոսրով Մխիթարյանի տվյալներն են և մերժել Մասնակցի հայտը:

1.8. Պատվիրատուի կողմից նշված Մասնակցի դիմում հայտարարությունում լրացված են Ընկերության մասնակիցների տվյալները, այլ ոչ թե իրական շահառուներինը, այդ հանգամանքը հենց հանդիսանում է Հրավերի պահանջ: Ընդ որում Ընկերության մասնակիցները կարող են լինել մի քանիսը, իսկ իրական շահառուն մեկը և այդ հանգամանքը հիմք չէ Մասնակցի հայտը մերժելու համար:

2. Գործի փաստական և իրավական հիմնավորումները.

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Նշված իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ Մասնակցի հայտը մերժվում է այն դեպքում, երբ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ և սահմանված ժամկետում չեն շտկվում:

Պայմանավորված նշվածով պետք է փաստել, որ սույն գործով պարզաբանման է ենթակա այն հարցադրումը, թե՞ արդյոք մասնակցի կողմից ներկայացված ահյտում առկա է հրավերի պահանջների անհամապատասխանություն, թե՞ ոչ:

Սույն դեպքում Պատվիրատուն Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրել է ենթադրյալ երկու անհամապատասխանություն: Առաջինը այն, որ տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրում առաջարկվող ապրանքը, որը Մասնակցի կողմից շտկվել է սահմանված ժամկետում և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի չներկայացնելու հանգամանքը: Նշեմ որ նախ Հրավերը 1.2 կամ 1.3 հավելված, ուստի այդ պահանջը չի բխում հրավերից և դրա չներկայացնելը չի կարող դիտարկվել հրավերի պահանջների անհամապատասխանությունը, իսկ օրենսդիրը Մասնակցի հայտի ներկայացման անհամապատասխանության հիմքով Մասնակցի հայտի մերժման հնարավորություն նախատեսել է միայն հրավերի պահանջների անհամապատասխանության մասով, այլ ոչ թե՞ Պատվիրատուի ցանկությունների կամ առանձին հրապարակված փաստաթղթերի: Երկրորդ եթե նույնիսկ ընդունենք, որ Մասնակիցը կրում էր 1.2 կամ 1.3 հավելվածի ներկայացման հրավերով նախատեսված պարտավորություն, ապա այն նույնպես կատարել է և Պատվիրատուի 16.11.2021 թվականի թիվ 3 արձանագրային որոշմամբ նշած այն դիրքորոշումը, որ Մասնակցի դիմում հայտարարությամբ լրացված է 3 իրական շահառուի տվյալ, մինչդեռ հայտարարագրում միայն Խոսրով Մխիթարյանի տվյալներն, առնվազն տարակուսելի է, քանզի դիմում հայտարարությունում լրացվում են և լրացված են Ընկերության մասնակիցների տվյալները, այլ ոչ թե իրական շահառուներինը, այդ հանգամանքը հենց հանդիսանում է Հրավերի պահանջ:

Վերոգրյալով պայմանավորված պետք է փաստել, որ Մասնակցի կողմից հրավերով ստանձնած պարտավորության խախտում առկա չէ և Պատվիրատուն ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում է Մասնակցի հայտը մերժել: Իսկ ստանձնած պարտավորության խախտման բացակայությունը բացառում է Մասնակցին գնումների գործընթացում ներառելու հիմքերը:

3. պահանջը.

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ԼԱՅԹ ԸՆԴ ՄՈՐ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը Պատվիրատուի սահմանած ժամկետում ներկայացվել

է նրան, և էլեկտրոնային եղանակով կցվել է երկու փաստաթուղթ, որից առաջինը եղել է պատշաճ տարբերակով, իսկ երկրորդը Պատվիրատուի աշխատակցի ցուցումով, ուստի ըստ Մասնակցի կողմից իրական շահառուների վերաբերյալ պատշաճ տեղեկատվության ներկայացման փաստը ապացուցելու համար, խնդրում եմ պահանջել Պատվիրատուից ներկայացնելու»:

«Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/310 ընթացակարգի շրջանակներում 30.11.2021թ. ժամը 09:10-ին և 08.12.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.11.2021թ. թիվ 1/18-2/73679-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Արկինա» ՍՊԸ-ի, «Լանկա» ՍՊԸ-ի և «Լայթ ընդ Մոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 10.11.2021թ-ին կազմակերպությունը ծանուցվել է ներկայացնել հայտի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթերը շտկվել են, բայց չեն համապատասխանել հրավերի պահանջներին և կարգի 42-րդ կետի համաձայն հայտը մերժվել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Արինկա» ՍՊԸ-ին, «Լանկա» ՍՊԸ-ին և «Լայթ ընդ Մոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում ընթացակարգի փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/310 ընթացակարգի շրջանակներում 30.11.2021թ. ժամը 09:10-ին և 08.12.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/310 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/310 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Արկինա», «Լանկա» և «Լայթ ընդ մոր» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«ա. «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3 (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան), ընդ որում, հայտով նշված չէ, որ կից ներկայացնում է վերոնշյալ հայտարարագիրը: 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրում առաջարկվող ապրանքը:

բ. «Լանկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան), ընդ որում, հայտով նշված չէ, որ կից ներկայացնում է վերոնշյալ հայտարարագիրը:

գ. «Արկինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում կազմակերպահիրավական ձևը լրացված չէ, հայտով նշված չէ, որ կից ներկայացնում է հայտարարագիրը համաձայն 2.1-ի: Հավելված 1.2-ում իրական շահառուների մասին հայտարարագիրը թվագրված է 25.10.2021թ. մինչդեռ հրավերը հրապարակվել է 02.11.2021թ. և 4.5.1 կետը լրացված չէ: Համակարգում կցված 4-րդ չափաբաժնի մասով անհրաժեշտ է կատարել շտկում («լուսաշողի հոսքը-960ԼՄ» նշումը չի համապատասխանում հրավերով սահմանված նվազագույն պահանջին)»:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.11.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակիցների կողմից շտկված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31 ծածկագրով հրավերի պահանջներին, մասնավորապես՝ «Արկինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված չեն չափաբաժինները, որոնց մասնակցել է, «Լանկա» ՍՊԸ-ն լրացրել է իրական շահառուներից մեկի տվյալները (Մասնակցության 65%), «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի դիմում-հայտարարությամբ լարցված է 3 իրական շահառուի տվյալ, մինչդեռ հայտարարագրում միայն Խոսրով Մխիթարյանի տվյալներն են և որոշում կայացրել Ընկերությունների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.11.2021թ. թիվ 26/26-1/19206-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 17.11.2021թ. թիվ 1/18-2/73679-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Լայթ ընդ մոր», «Լանկա» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված դիրքորոշումները, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի

կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով***

ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Արկինա», «Լանկա» և «Լայթ ընդ մոր» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«ա. «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3 (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան), ընդ որում, հայտով նշված չէ, որ կից ներկայացնում է վերոնշյալ հայտարարագիրը: 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրում առաջարկվող ապրանքը:

բ. «Լանկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան), ընդ որում, հայտով նշված չէ, որ կից ներկայացնում է վերոնշյալ հայտարարագիրը:

գ. «Արկինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում կազմակերպահիրավական ձևը լրացված չէ, հայտով նշված չէ, որ կից ներկայացնում է հայտարարագիրը համաձայն 2.1-ի: Հավելված 1.2-ում իրական շահառուների մասին հայտարարագիրը թվագրված է 25.10.2021թ. մինչդեռ հրավերը հրապարակվել է 02.11.2021թ. և 4.5.1 կետը լրացված չէ: Համակարգում կցված 4-րդ չափաբաժնի մասով անհրաժեշտ է կատարել շտկում («լուսաշողի հոսքը-960ԼՄ» նշումը չի համապատասխանում հրավերով սահմանված նվազագույն պահանջին)»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝

Ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.11.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակիցների կողմից շտկված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31 ծածկագրով հրավերի պահանջներին, մասնավորապես՝ «Արկինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված չեն չափաբաժինները, որոնց մասնակցել է, «Լանկա» ՍՊԸ-ն լրացրել է իրական շահառուներից մեկի տվյալները (Մասնակցության 65%), «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի դիմում-հայտարարությամբ լարցված է 3 իրական շահառուի տվյալ, մինչդեռ հայտարարագրում միայն Խոսրով Մխիթարյանի տվյալներն են և որոշում կայացրել Ընկերությունների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունները Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել են անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն որպես շտկում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կրկին արձանագրվել են անհամապատասխանություններ Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ, այսինքն՝ Ընկերությունները «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ են տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Անդրադառնալով Ընկերությունների կողմից ներկայացված դիրքորոշումներով վկայակոչված փաստական հանգամանքներին՝ հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

1. «Լանկա» ՍՊԸ-ն ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«հայտերի գնահատման գործընթացը սկսվում է հակադարձ աճուրդի ավարտից հետո, քանի որ մինչև հակադարձ աճուրդի ավարտը Էլեկտրոնային աճուրդի համակարգում մասնակիցների հայտերը գնահատման համար հասանելի չեն: Հետևաբար մինչև հակադարձ աճուրդի ավարտը Պատվիրատուն մասնակիցների հայտերը չէր կարող գնահատել, ուստի անհիմն է սույն Ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք ծառայած Պատվիրատուի պնդումը, որ 10.11.2021թ.-ի դրությամբ Ընկերության հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք Ընկերությունը 10.11.2021թ-ին հաջորդող մեկ

աշխատանքային օրվա ընթացքում չի շտկել: Քանի որ 10.11.2021թ.-ին հակադարձ աճուրդը դեռ չէր ավարտվել և Պատվիրատուն այդ օրվա դրությամբ Ընկերության հայտը գնահատելու հնարավորություն չուներ: Բացի այդ, 10.11.2021թ.-ին Պատվիրատուն հայտը շտկելու վերաբերյալ ծանուցում Ընկերությանը չի ուղարկել»:

Այս մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

«ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարության համաձայն՝ ***մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 10.11.2021թ. ժամը 12:30-ը:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.2 կետի համաձայն՝ ***էլեկտրոնային աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2021.11.11. 12:30-ին:*** Եթե աճուրդը սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա աճուրդը սկսվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Աճուրդ չի կարող կազմակերպվել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո:

Նույն բաժնի 8.9 կետի համաձայն՝ ***աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ***, որի ընթացքում՝

1) գնահատվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը:

(...)

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերությունների հայտերում, այդ թվում՝ «Լանկա» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ:

«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 03.12.2021թ. գրության տեղեկացնում ենք, որ մեր կողմից ուսումնասիրվել է eauction.armeps.am համակարգի տվյալների շտեմարանը: Տեղեկացնում ենք, որ «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում պատվիրատուի կողմից «Լանկա» ՍՊԸ-ին դիմում հայտում շտկում կատարելու մասին ծանուցումն ուղարկվել է 12.11.2021թ. 16:16:55-ին»:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է վերը շարադրված կարգավորումներով սահմանված պահանջների պահպանմամբ, այն է՝ ինչպես սահմանվել է հրավերով, ***<u>աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 12.11.2021թ. հրավիրել է գնահատող հանձնաժողովի նիստ</u>***, որի ընթացքում գնահատել է «Լանկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը և արձանագրելով անհամապատասխանություն նույն օրը՝ 12.11.2021թ. ծանուցել է վերջինիս, ուստի՝ այս մասով գտնում եմ, որ «Լանկա» ՍՊԸ-ի դիտարկումն անհիմն է:

Ինչ վերաբերում է «Լանկա» ՍՊԸ-ի այն դիտարկմանը, որ աճուրդով ձեռքբերման ենթակա ապրանքները ընդգրկված չեն Տեղեկագրում հրապարակված գնումների պլանում, որպիսի հանգամանքներում աճուրդի կազմակերպման իրավական հիմքը բացակայում է, հարկ եմ համարում հայտնել, որ ՀՀ ֆինանսների նախարարը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց ուղղված 03.06.2021թ. թիվ Ն/26-1/13078-2021 գրությամբ և ՀՀ պետական կառավարման մարմինների ղեկավարներին ուղղված 25.05.2021թ. թիվ 01/26-1/5596-2021 գրությամբ հայտնել է, որ ***բացակայում է պետական կառավարման մարմինների կարիքների համար գնումների պլանները (դրանցում կատարված փոփոխությունները) տեղեկագրում առանձին հրապարակելու անհրաժեշտությունը, նկատի ունենալով, որ <u>էլեկտրոնային գնումների համակարգ (www.armeps.am/ppcm) մուտքագրված պլանները</u>***

<u>ավտոմատ եղանակով հասանելի են նաև տեղեկագրում, ուստի այս մասով «Լանկա» ՍՊԸ-ի դիտարկումը ևս անհիմն է:</u>

2. Ինչ վերաբերում է «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված դիտարկումներին, այն է՝ «Պայմանավորված նշվածով պետք է փաստել, որ սույն գործով պարզաբանման է ենթակա այն հարցադրումը, թե՞ արդյոք մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերի պահանջների անհամապատասխանություն, թե՞ ոչ:

Սույն դեպքում Պատվիրատուն Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրել է ենթադրյալ երկու անհամապատասխանություն: Առաջինը այն, որ տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրում առաջարկվող ապրանքը, որը Մասնակցի կողմից շտկվել է սահմանված ժամկետում և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի չներկայացնելու հանգամանքը: Նշեմ որ նախ Հրավերը 1.2 կամ 1.3 հավելված, ուստի այդ պահանջը չի բխում հրավերից և դրա չներկայացնելը չի կարող դիտարկվել հրավերի պահանջների անհամապատասխանությունը, իսկ օրենսդիրը Մասնակցի հայտի ներկայացման անհամապատասխանության հիմքով Մասնակցի հայտի մերժման հնարավորություն նախատեսել է միայն հրավերի պահանջների անհամապատասխանության մասով, այլ ոչ թե՞ Պատվիրատուի ցանկությունների կամ առանձին հրապարակված փաստաթղթերի: Երկրորդ եթե նույնիսկ ընդունենք, որ Մասնակիցը կրում էր 1.2 կամ 1.3 հավելվածի ներկայացման հրավերով նախատեսված պարտավորություն, ապա այն նույնպես կատարել է և Պատվիրատուի 16.11.2021 թվականի թիվ 3 արձանագրային որոշմամբ նշած այն դիրքորոշումը, որ Մասնակցի դիմում հայտարարությամբ լրացված է 3 իրական շահառուի տվյալ, մինչդեռ հայտարարագրում միայն Խոսրով Մխիթարյանի տվյալներն, առնվազն տարակուսելի է, քանզի դիմում հայտարարությունում լրացվում են և լրացված են Ընկերության մասնակիցների տվյալները, այլ ոչ թե իրական շահառուներինը, այդ հանգամանքը հենց հանդիսանում է Հրավերի պահանջ», հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնի 4.3 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության կամ սույն հրավերով սահմանված վարկունակության վարկանիշ ունենալու մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան); Ընդ որում՝

- 1.2 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ կամ այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

-1.3 հավելվածը ներկայացնում է այն մասնակիցը, որը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ է և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ սահմանված կարգով պետք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված լիներ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է.

- դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում:

Եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հավելվածը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում:

2) գնային առաջարկ, որը ներկայացվում է համակարգի միջոցով: Գնային առաջարկի ներկայացման կարգը և պայմանները սահմանված են սույն հրավերի 1-ին մասի 5-րդ և 2-րդ մասի 2-րդ բաժնով:

3) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով:

5) գործակալության պայմանագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

6) համատեղ գործունեության պայմանագրի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ բաժնի 2.1 կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ձեռնարկով սահմանված կարգով ներկայացնում է հայտ: Հայտում ներառվող փաստաթղթերին և դրան հաստատմանը ներկայացվող պահանջները սահմանված են սույն հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնով:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնի 4.3 կետով հստակ սահմանված են պահանջներ, թե Ընթացակարգին մասնակցության հայտով մասնակցի կողմից ինչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն, այդ թվում՝ նախատեսված է Ընթացակարգի մասնակցի կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի ներկայացնելը, այսինքն՝ «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի այն դիտարկումը, որ նշված դեպքում պետք է պարզել արդյո՞ք մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերի պահանջների

նկատմամբ անհամապատասխանություն, որի պայմաններում միայն օրենսդիրը Մասնակցի հայտի ներկայացման անհամապատասխանության հիմքով Մասնակցի հայտի մերժման հնարավորություն է նախատեսել, անհիմն է, քանի որ տվյալ դեպքում մասնակցի կողմից հրավերով նախատեսված հավելվածներում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում առկա է հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, այսինքն՝ կիրառելի են Կարգի 41-րդ և 42-րդ կետերով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի այն դիտարկմանը, որ դիմում հայտարարությունում լրացվում են և լրացված են Ընկերության մասնակիցների տվյալները, այլ ոչ թե իրական շահառուներինը, այդ հանգամանքը հենց հանդիսանում է Հրավերի պահանջ, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3 (ներկայացված հայտարարագրի ձևին համապատասխան), ընդ որում, հայտով նշված չէ, որ կից ներկայացնում է վերոնշյալ հայտարարագիրը, իսկ 16.11.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված դիմում-հայտարարությամբ լրացված է 3 իրական շահառուի տվյալ, մինչդեռ՝ հայտարարագրում միայն Խոսրով Մխիթարյանի տվյալներն են:

Որպես շտկում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, արձանագրում եմ, որ Հավելված 1-ով սահմանվել է հետևյալը.

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի քան տասնհոգուսը, ներառյալ ըստներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավատում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

Այսինքն՝ Հավելված 1-ով սահմանված վերը նշված կետը վերաբերում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը, ուստի արձանագրում եմ, որ սույնով մասնակցի կողմից ներկայացված տեղեկատվությունն իրական շահառուների մասին է և այն պետք է համապատասխանի Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում ներկայացված տեղեկատվությանը, իսկ քննարկվող դեպքում «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ն մի դեպքում նշել է թվով 3 մասնակցի անուն, մյուս դեպքում՝ որպես շտկում ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4-րդ կետի 4.1 ենթակետում նշել է միայն 1 իրական շահառուի տվյալ:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում հայտնել, որ «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացվել են միջնորդություններ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին հարցումներ կատարելու վերաբերյալ, որոնք բավարարվել են:

Ի պատասխան նշված միջնորդությունների վերաբերյալ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գրությունների «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն 1-ին գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 03.12.2021թ. թիվ ՍՑ-ՆԳ-2021/310 գրության տեղեկացնում ենք, որ մեր կողմից ուսումնասիրվել է eauction.armeps.am համակարգի տվյալների շտեմարանը: «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի կողմից կցված է հավելված 1.2-ի մեկ փաստաթուղթ:

Կից ֆայլով տրամադրում ենք Ձեզ «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի կողմից «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում կցված հավելված 1.2-ի փաստաթուղթը»:

2-րդ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 13.12.2021թ. թիվ ՍՑ-ՆԳ-2021/310 գրության տեղեկացնում են, որ մեր կողմից ուսումնասիրվել է eauction.armeps.am համակարգի տվյալների շտեմարանը:

Կից ֆայլով ուղարկում ենք Ձեզ «ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/31» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ի կողմից դիմում հայտում շտկում կատարելու նպատակով համակարգում կցված փաստաթղթերը»:

«ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի գրությունները՝ կից փաստաթղթերով ուղարկվել են «Լայթ ընդ մոր» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացուցչին, սակայն որևէ դիրքորոշում նշված գրությունների վերաբերյալ չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.11.2021թ. թիվ 26/26-1/19206-2021 գրությամբ «Արկինա», «Լանկա» և «Լայթ ընդ մոր» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**